Հայտարարություն

ՀՀ Վայոց ձորի մարզի,Արենի համայնքի, Ռինդ, Ելփին, Չիվա բնակավայրերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ Չիվայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. *ՀՀ քաղաքացիությունը,*
2. *Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :*

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է.

1. *Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,*
2. *ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,*
3. *Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*
4. *Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով,*
5. *Ինքնակենսագրություն*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Չիվայի միջնակարգ դպրոցում (մշակույթի տանը) 2022 թվականի դեկտեմբերի 6-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի, ոչ աշխատանքային և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ-ի հունվարի 11- ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոցում: Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Չիվա բնակավայր, Փ. 2, նրբ. 4 (մշակույթի տուն):

Տեղեկությունների համար զանգահարել 093-78-54-86 կամ 094-46-10-05 հեռախոսահամարներով, էլ. Փոստ՝ chiva@schools.am, hracin.gevorgyan1980@gmail.com :